ՈՍԿԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱՏԻՐԱՆ

Ստեփան Ոսկանյանը մեր մշակութային այն գործիչներից է, որն իր գիտակցական կյանքի ավելի քան վաթսուն տարիների ընթացքում հանդես է եկել գրականության գրեթե բոլոր ժանրերով։ Բանաստեղծություններ (ինչպես գրաբար, այնպես էլ աշխարհաբար), պոեմ, գեղարվեստական արձակ և այդ թվում մեկ անավարտ վեպ, հրապարակախոսություն, թարգմանություններ՝ ֆրանսերենից և իտալերենից հայերեն և հայերենից ֆրանսերեն, գրական քննադատություն,- ահա մոտավոր թվարկումը այն ժանրերի, որոնց դիմել է նա։ Դաստիարակված լինելով եվրոպական ռոմանտիկական գրականության ոգով, Ոսկանյանն իր գործունեությամբ աշխատում էր հասնել այն բանին, որ հայկական գրական կյանքում էլ տեղակայվի ու ըստ ամենայնի արմատակալի գրական այն ուղղությունը, որի համար էլ նա ի սպաս էր դրել գրական-գեղարվեստական իր բոլոր կարողությունները։

Ժանրային իմաստով այսպիսի բազմաբնույթ գործերի շարքում և, թերևս, այդ բոլորից առավել, Ոսկանյանն իրեն դրսևորեց երգիծական ստեղծագործությունների կամ, ընդունված տերմինով ասած, քաղաքական սատիրայի բնագավառում։ Այս էլ պատահական չէր, և այս էլ էր գալիս ռոմանտիկական դպրոցի պոետիկայից։ Կլասիցիստները, որոնց ապավենն ու պաշտամունքը «լուրջ» պոեզիան էր, հաշտ աչքով չէին նայում երգիծական բնույթի երկերին և հնարավոր ամեն առիթով աշխատում էին բացազատվել նրանից։ Այս էր պատճառը, որ չնայած եվրոպական և ռուսական կլասիցիզմի այլևայլ ներկայացուցիչները (Ռասին, Լաֆոնտեն, Վոլտեր, Կանտեմիր, Սումարոկով) կարողացան ստեղծել այդ բնույթի ոչ քիչ թվով ուշագրավ գործեր, բայց մինչև վերջ այն որպես ինքնուրույն ժանր չձևավորվեց նրանց համար։

Երգիծական բնույթի բանաստեղծությունները ոգեկոչվեցին ռոմանտիկական գրականության ներկայացուցիչների կողմից, այնուհետև դրանք իրենց դրսևորումը գտան Ֆրանսիայում, հանձին Բերանժեի։ Սայրասուր ծաղրի առարկա դարձնելով Ֆրանսիայի ազնվականությանը, պետական-կառավարական ավագանուն, կաշառակեր դատավորներին, թագավորներին, Հռոմի պապին և նրա կաթոլիկ սպասավորներին, անգամ աստծուն ու նրա դրախտը, Բերանժեն քաղաքացիական իրավունք տվեց երգիծական-սարկաստիկ բանաստեղծություններին, կլասիցիստական արհամարհված «ցածր» պոեզիայից դարձնելով դրանք հասարակական-քաղաքական պայքարի հզոր միջոց։

Ստեփան Ոսկանյանը ոչ միայն որոշակիորեն կրել է Բերանժեի ազդեցությունը, ոչ միայն նրա հետևորդն է եղել գրական-հասարակական շատ հարցերում, այլև բացառված չէ, որ անգամ անձնական ծանոթություն է ունեցել նրա հետ։ Հայազգի հրապարակագիրը ֆրանսիացի իր մեծ ուսուցչի օրինակելի հետևորդը հանդիսացավ նաև այս, այսինքն՝ հասարակական կյանքում առկա խոտելի կողմերը երգիծական բանաստեղծություններով նշավակելու բանգավառում։ Ոսկանյանը «Արևմուտքի» միջոցով հետևողականորեն հորդորում էր «ազգայիններին», որ վերջիններս նույնպես «բանահյուսության (իմա. պոեզիայի». Ս.Շ.) այս մասը մշակեն»[1]։ Իսկ հայկական վայրիվերո կյանքը և մանավանդ նրա մտավորականությունը, որի կազմում հազվագյուտ չէին սնամեջ մեծությունները, առավել քան պարարտ հող էին ստեղծում նշված բնույթի պոեզիայի զարգացման համար։

«Արևմուտքի» 1859թ. փետրվարյան համարում լույս տեսավ Ոսկանյանի «Գաբրիկ» երգիծական բանաստեղծությունը, գրված հայտնի Գաբրիել վարդապետ Այվազովսկու դեմ։

---

[1] «Արևմուտք», 1859, № 3

Ճշտորեն հասկանալու համար Ոսկանյանի վերաբերմունքը Այվազովսկու նկատմամբ մինչև «Գաբրիկ» բանաստեղծությունը (Ոսկանյանը իր նախորդ՝ «Արևելք» պարբերականում մի քանի անգամ դրվատանքի խոսքեր էր ասել Այվազովսկու մասին), հարկավոր է մի քանի խոսքով անդրադառնալ վերջինիս փարիզյան շրջանի գործունեությանը։

Այվազովսկին Վենետիկի վանքից Փարիզ եկավ 1848թ. հունիսին և եկավ բավականին անպատվաբեր առաքելությամբ։ Նա պետք է «խոնարհություն» բերեր և ի «հնազանդություն» դարձներ Փարիզի Մուրատյան վարժարանի սաներին, որոնց մեջ սկսել էին թափանցել 1848թ. փետրվարյան հեղափոխության գաղափարները։ Քաղցրախոսությամբ, անհրաժեշտության դեպքում՝ Աստծո զորության և Հռոմի պապի ահեղասաստ վկայակոչումներով, իսկ ավելի հաճախ՝ պարզ սպառնալիքներով ու այդ սպառնալիքներն իրականացնելով (ժամանակին պարբերական սպրդեց տեղեկություն այն մասին, որ Այվազովսկին դիմել է անգամ ֆրանսիական ոստիկանության օգնությանը), «Հայր Գաբրիելը» կարողացավ, ի վերջո, խաղաղեցնել փոթորկված Մուրատյան վարժարանը։ Աշխատանքային մի գործունեություն էր սա, որը դրվատանքի արժանացավ Վենետիկի Մխիթարյան միաբանության ղեկավարների կողմից, և նա նշանակվեց այդ վարժարանի փոխտեսուչ և ուսուցիչ։ Բայց մի գործունեություն էր սա, որը բացասաբար գնահատվեց փարիզահայ (և ոչ միայն փարիզահայ) առաջադեմ ներկայացուցիչների կողմից։ Իհարկե, վերջիններիս շարքում էր նաև Ոսկանյանը, որը ոչ միայն իր վրդովմունքը հրապարակեց Այվազովսկու «խաղաղասիրական» գործունեության նկատմամբ, այլև, իմանալով, որ վերջինս ընդգրկվել է 1849թ. Փարիզում հիմնված կրթալուսավորչական «Արարատյան ընկերության» (սկզբնական շրջանում՝ «Արամյան ընկերություն») կազմում, որի անդամներից մեկն էլ ինքն էր, անհապաղ հրապարակավ հրաժարվեց այդ ընկերությունից[2]։

Սակայն իրադարձությունները հետագայում զարգացան, ասես, հօգուտ Այվազովսկու։ Չհանդուրժելով Վենետիկի Մխիթարյան միաբանության ղեկավարության հռոմեահաճ քաղաքականությունը, Այվազովսկին 1855թ. կեսերին ցուցադրաբար հրաժարվեց նրանցից, իսկ մի տարի անց՝ 1856թ. հունիսին հրաժարվեց առհասարակ կաթոլիկությունից։ Այս ամենն ասես ամբողջացնելու նպատակով, 1858թ. նա հրատարակեց «ՈՒրվագիծ ոգվո և ընթացից Մխիթարյան միաբանության» խորագրով գրքույկը (վերահրատարակվել է Թեոդոսիայում 1876թ.), որտեղ քննադատեց աշխատանքի այն մեթոդները, որոնք որդեգրել էին Մխիթարյանները։ Հաստատվելով Փարիզի մի այլ թաղամասում, Այվազովսկին շուտով իր երեք համագործակիցների՝ Ամբրոսիոս և Խորեն Գալֆայան եղբայրների ու Սարգիս Թեոդորյանի հետ հայկական դպրոց հիմնեց (որի մասին գոհունակությամբ արտահայտվեց Նալբանդյանը)[3] և սկսեց հրատարակել «Մասյաց աղավնի» երկլեզու պարբերականը։ Այս ժամանակ էր ահա, որ Ոսկանյանն իր «Արևելքի» էջերից համակրանքի խոսքեր ասաց նրա հասցեին, գոհունակությամբ արձանագրեց նրա մեծ եռանդն ու կազմակերպչական կարողությունները, մի քանի լեզուների իմացությունը։

Անցավ էլի՛ մի որոշ ժամանակ և դեպքերի ընթացքը այս անգամ արդեն վերջնականապես հուսախաբ արեց Այվազովսկու հետ որոշ ակնկալիքներ կապողներին։ Պարզվեց, որ նրա «դարձը» խնամքով մտածված դիվանագիտական դիմաշրջություն էր միայն, որը հեռուն գնացող նպատակներ էր հետապնդում։ Հանելով իր կաթոլիկական վեղարը, Այվազովսկին շարունակում էր մնալ պայքարի ոչ մի միջոցի առջև կանգ չառնող նույն նենգ անձնավորությունը։ Այդ բանը, թերևս, բոլորից շուտ և որոշակի զգաց Ոսկանյանը, որովհետև Այվազովսկու պարզ մատնության հետևանքով էր, որ իր գոյությունը դադարեցրեց նրա առաջին՝ «Արևելք» պարբերականը։ Մի բան,

---

[2] «Արևմուտք», 1859, № 20

[3] Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք Ա, Երևան, 1955, էջ 255 և հտն.։

որ ոչ միայն հոգեկան ծանր ապրումների ու ներքին երկարատև հուզումների պատճառ հանդիսացավ նրա «շարագրի» համար, այլև անուղղելի վնաս հասցրեց հայ հասարակական մտքի առաջադեմ ներկայացուցիչներին[4]։ Այս բոլորից հետո արդեն հասկանալի է, թե ինչու Ոսկանյանը պետք է հակառակորդ դիտեր Այվազովսկուն, այս հասկացողության ամենալայն իմաստով և բաց չթողներ նրան խարազանելու առաջին իսկ առիթը։ Հենց դրա տրամաբանական արդյունքն է Ոսկանյանի «Գաբրիկ» բանաստեղծությունը։

Մորուք Գաբրիկ, ուսկե՞ գաս

Առլրքենի սենյակե։

Մեկ ժամ օրհնել և վակաս

Կրել, քրտնել հերիք է։

Արդ ժամ եհաս աշխարհական,

Փեղույր և վարտիք հագնել է արժան.

Հույս բնավ չիք այլ օրհնենքս

Ոստելու նայինք, հոն է շահ հիմա։

Գաբրիկ ահա գա,

Ահա կը դառնա,

Եվ որ կողմ դառնա, նոր դեմք ցույց կուտա։

Ոսկանյանը «Գաբրիկի» համար ուղեցույց է ունեցել Բերանժեի «Բարեպաշտ հայրեր» («Les révereds peres») բանաստեղծությունը։ Սպանիչ սարկազմով գրված մի ստեղծագործություն՝ ուղղված կաթոլիկության ներկայացուցիչների դեմ։ Այն լույս աշխարհ գալուն պես (1819թ.) երգի վերածվեց և երգվում էր Փարիզի փողոցներում, մանավանդ 1848թ. իրադարձություններ ժամանակ, որի համար պապը՝ Պիոս IX, բանադրեց Բերանժեին։ Ոսկանյանը ոչ միայն որոշակիորեն ազդվել է Բերանժեի «Բարեպաշտ հայրերից», ոչ միայն ճշտորեն պահպանել է անգամ տների քանակությունը (վեց տուն) և նրանց բանաստեղծական տողերի վանկային տարբեր չափերը, այլև աննշան փոփոխությամբ որպես առաջին տող օգտագործել է Բերանժեի բանաստեղծության առաջին տողը «Սև մարդիկ, որտեղի՞ց եք գալիս» (ֆրանսերեն՝ «Hommes noirs d'ou sortez vous?»)[5]։ Կառուցելով իր բանաստեղծությունը Բերանժեի բանաստեղծության չափով, Ոսկանյանը ստեղծել է միանգամայն ինքնուրույն, ամբողջապես ազգային բանաստեղծություն, որտեղ անողոք ծաղրի է

---

[4] Թե Այվազովսկու «Մասյաց աղավնին», և թե Ոսկանյանի «Արևելքը» շարվում և հրատարակվում էին միևնույն՝ Ճանիկ Արամյանի տպարանում։ Հետևաբար այստեղ, իմանալով, որ Ոսկանյանն իր պարբերականի 1856թ. № 15-ում (մարտ) ընդարձակ հոդվածով հանդես էր գալիս Ֆրանսիայում թուրքական պետության ներկայացուցիչ, գերագույն ժողովի ատենապետ Հակոբ Կրճիկյանի դեմ, Այվազովսկին շտապում է նրան «տեղեկացնել» այդ մասին։ Հետևանքն այն է լինում, որ Կրճիկյանը ոչ միայն կարողանում է կասեցնել «Արևելքի» հերոհիշյալ համարի հրատարակությունը (Կրճիկյանի դեմ գրված հոդվածը Ոսկանյանն, այնուամենայնիվ, հրատարակեց հետագայում, «Արևմուտքի» №7-ում), այլև խափանել է տալիս «Արևելք» պարբերականն ընդհանրապես։ Այս էր ակնարկում Ոսկանյանը, երբ հետագայում դառնությամբ արձանագրում էր, որ ինչքան էլ շատ լինի տարիների հեռավորությունը, «զորություն չունի մեզ մոռանալ տալ Այվազովսկիի մը և Կռճիկյանի մը ըրածը...»։

[5] Ի դեպ նշենք, որ Բերանժեի բանաստեղծության այս ֆրանսերեն տողը հայատառ ընթերցմամբ («Օմմը նուաղ, տու սոթեվու») Ոսկանյանն օգտագործել է որպես բնաբան իր «Ներքին համոզումն» աշխատության համար (Պոլիս, 1853, էջ 3)։

ենթարկված ամեն ինչ վաճառքի հանող, ամեն սրբություն ոտնատակ տվող Այվազովսկին, այսինքն մեկը, որը՝

... ահա գա,

Ահա կը դառնա,

Եվ որ կողմ դառնա, նոր գույն ցույց կտա։

Կամ՝

Գաբրիկ ահա գա,

Ահա կը դառնա,

Եվ որ կողմ դառնա, ոսկի կը մուրա։

«Գաբրիկի» անազնիվ արարքների բացահայտումը շարունակվում է հետևողականորեն, թերթ առ թերթ։ Հանգամանորեն բացահայտվում է նաև Այվազովսկի-հասարակական գործիչը, որը ազգության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերը հաճախ «լուծում էր» ձեռնածուներին հատուկ ճարպկությամբ ու նրանց բնութագրող մեթոդներով.

Գաբրիկ ըսե ի ձեռքին

Ի՞նչ կտանիս սրբորեն

Հնարքներու տուփ մ'անգին

Եվ հայ ազգին համորեն

Ճակատագիր անդ ներփակի։

Երկու տարի անց, 1861թ. Հարություն Սըվաճյանը «Մեղվում» արտատպելու էր այս տունը, իր պայքարն Այվազովսկու դեմ ավելի նպատակասլաց դարձնելու համար։ Փաստ է սա, որը ցույց է տալիս գաղափարական հոգեհարազատություն Սըվաճյանի և Ոսկանյանի միջև[6]։

Հանգամանորեն Այվազովսկուն «վերլուծելուց» հետո, ի վերջո, անդրադառնալով իր ազգակիցներին, Ոսկանյանը դատավճռի ուժգնությամբ հայտարարում է.

Ապու՛շ հայեր, որք տակավին

Այսքան փորձե ետք հավտան Գաբրիկին։

Այսպես է գնահատվում Այվազովսկու գործունեությունը հայկական դեմոկրատական մտքի ներկայացուցչի կողմից։ Եվ հասկանալի է, որ նման գնահատականի պետք է արժանանային նաև այն մարդիկ, ովքեր հույս ու սպասելիքներ էին կապում Այվազովսկու հետ, այսինքն՝ հավատում էին նրան։

Քննության արժանի է «Գաբրիկ» բանաստեղծության երկրորդ տունը, որն սկսվում է «Կնտուկ Գաբրիկ, ի՞նչ է այդ» տողով։ Մի քանի տարի հետո Նալբանդյանը գրելու էր իր

[6] «Մեղու», 1861, № 133 («Գաբրիել Այվազովսկի և ազգային խալիպյան վարժարան, որ ի Թեոդոսիա»)։

հանրահայտ երգիծական բանաստեղծությունը Այվազովսկու դեմ, որն ուներ «Կնտուկ պոչատի և նորա Սանչոյի մկրտությունը» խորագիրը։ Դժվար չէ նկատել, որ Նալբանդյանը գրեթե անփոփոխ ձևով օգտագործել է Ոսկանյանի թևավոր դարձվածքը, և այստեղ արդարանում է ակադ. Ա.Հովհաննիսյանի ճշմարիտ դիտարկումը. «...մի երկու դեպքում Նալբանդանն ուղղակի արձագանքում էր Ոսկանյանին»[7]։

Եթե «Գաբրիկ» բանաստեղծությամբ Ոսկանյանը սպանիչ ծաղրի էր ենթարկում Այվազովսկուն և մատնանիշ էր անում նրա գործունեության երկդիմությունը, ապա գրական նույն ժանրին պատկանող մյուս՝ «Սագ մը պուետ» բանաստեղծությունը (այն երեք ամիս անց հրատարակվեց «Արևմուտքում»), որի «հերոսը» Խաչատուր «պուետ» Միսաքյանն էր, արդեն այլ նպատակներ ուներ։ Այս համբավավոր «պուետի» գործին անդրադարձել են բազմիցս և, կարևոր է, անդրադարձել են մեր մշակույթի ամենատարբեր բնագավառի մարդիկ։ Նրան իր «Ազգային ջոջերում» տեղ է տվել Հակոբ Պարոնյանը, «Ծանոթ դեմքեր» կենսագրաշարում անդրադարձել է Գրիգոր Զոհրապը, նրա մասին առանձին ուսումնասիրություն է գրել Հարություն Մրմրյանը, իր «Հիշատակարանում», վերջապես, նրան բավականին ծավալուն մի հատված է հատկացրել Հովհաննես Զարդարյանը և այլն։ Այս հանգամանքը հնարավորություն է տալիս Խաչատուր Միսաքյանին «բռնել» տարբեր կողմերից արձակված ճառագայթների կիզակետում և, հետևաբար, առավել քան ճշգրտորեն տալ նրա գրական-մշակութային գործունեության բնութագիրը։ Այդ բնութագիրը ժամանակին մեկ սպառիչ նախադասությամբ տվել է Գրիգոր Զոհրապը, գրելով. «պետք է զեղչել, մեծապես զեղչել, իրեն թեկնածու եղած գրագետի, համայնագետի և իմաստասերի համբավեն»[8]։ Եվ երբ ժամանակների ու դեպքերի հեռավորությունից անդրադառնում ենք Զոհրապի հիշյալ ասույթին, ապա համոզվում ենք, որ այն ամբողջովին մնում է ուժի մեջ։

Ծույլ ուղեղի տեր էր «պուետը», որը չնայած լեզուների իր իմացությանը և XIX դարի երկրորդ կեսի հայկական գրական-մշակութային կյանքին մասնակցած լինելուն, մինչև վերջ էլ չկարողացավ որևէ չափով պիտանի մտավոր արժեքներ ստեղծել։ Հոգնած մտքերով և ժամկետանց դատողություններով հայկական պարբերականների էջերը չարչրկող մեկն էր «պուետը», որի գրած «դատականներն» ու «բանասիրականները» անհարգալից քմծիծաղով էին ընդունվում ժամանակակիցների և անգամ նրան համակրողների կողմից։ Շուրջ քսանհինգ տարի ապրելով Փարիզում, թե հայկական, և թե ֆրանսիական հասարակական կյանքի տեսակետից նշանակալի մի ժամանակաշրջանում, «պուետը» հիմնականում անհաղորդ մնաց այդ կյանքին և բութ ինքնավստահությամբ, անկիրք ու անտարբեր անցավ նրա կողքով։

Գիտա-հասարակական այսպիսի նկարագրով էր ներկայանում «պուետ» Միսաքյանն իր ժամանակակիցներին ու հաջորդներին։ Եվ հասկանալի է, որ նրա և Ոսկանյանի միջև աստիճանաբար պետք է հասունանար հակակրանքը, որն, ի վերջո, պետք է վերածվեր կատարյալ թշնամության։ Թե հատկապես երբ է սկսվել այդ թշնամությունը և ինչ պատճառներով, դժվար է ասել։ Հայտնի է միայն, որ իրենց փարիզյան կյանքի ամենասկզբնական տարիներից իսկ նրանց անունները հիշատակվել են միայն հակոտնյա ձևով։ «Երկու նշանավոր դեմք կար այն ժամանակ Փարիզի մեջ,- գրում էր Ա.Ալպոյաճյանը,- երկուսն ալ մահու չափ իրարու դեմ ատելությամբ լեցված։ Ստեփան Ոսկանյանն ու Խաչատուր Միսաքյանն են ասոնք, որոնք անհնարին սաստկությամբ իրարու կբախին շարունակ։ «Արևելքն» ու «Արևմուտքը» հակակշռող տեղական

[7] Աշ.Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 319։
[8] Գր. Զոհրապ, Երկերի ժողովածու, հ. Ե, 1962, էջ 400։

մամուլ մը չկար հոն. Խաչատուր Միսաքյան պոլսական մամուլին միջոցով միայն Ստեփան Ոսկանյանի կպատասխաներ»[9]:

Քանի դեռ այդ թշնամությունը խարսխվում էր իրար նկատմամբ չեզոք մնալու հենքի վրա – թե Ոսկանյանը, և թե Միսաքյանը զբաղված էին յուրաքանչյուրն իր անելիքներով և շարունակում էին, եթե կարելի է այսպես ասել, զուգահեռ գոյություն պահպանել: Սակայն բնությունը, եթե, այնուամենայնիվ, գրականագիտական-բանասիրական ինչ-որ կարողություններով օժտել էր «պուետին», բոլորովին զրկել էր հասարակական իրավիճակները հասկանալու և այդ պայմաններում կողմնորոշվելու տարրական ունակությունից: Դրդվելով ու հրահրվելով Ոսկանյանի կողմից տարբեր ժամանակներում, նշտակահար եղած այլևայլ «էֆենդիներից» ու «մեծատուններից», Խաչատուր Միսաքյանը ճակատագրական սխալ քայլ կատարեց. 1859թ. սեպտեմբերից Պոլսի «Մասիսում» սկսեց հանդես գալ մեծածավալ հոդվածաշարով ինչպես Ոսկանյանի, այնպես էլ նրա հրատարակած երկու պարբերականների դեմ: Խեղճուկրակ դատողություններ և պարզունակ, հարթ մտքի ողորմելի եռքով գրված մի հոդվածաշար է սա, որի գաղափարական առանցքը բազում ձևերով կրկնվող այսպիսի մտքերն են. «Ի՞նչ կուզե ըսել այս արյունկզակ կարմիր հասարակապետական բարբաջանքը», կամ «Մեկը պահպանելու համար զմյուսը կորուսանելը ո՛չ քրիստոնեական, ո՛չ բարոյական, ո՛չ մարդկային, այլ կարմիր հասարակապետական սկզբունք է» և այլն: Բանն ի վերջո հասնում է գռեհիկ հասարակախոսության ու դժոխքի սպասավորներին օգնության կանչելուն, այսինքն՝ «Գրվածք մը («Արևմուտքը»-Ս.Շ.), որուն առաջին թիվեն մինչև վերջինին մեջն ուսման, հմտության, դատման և ուղղախոսության հետք չիկա, գրվածք մը, որուն ամեն երեսներուն մեջ ուրիշ բան չի տեսնվիր, եթե ոչ շոշափելի տգիտության, աղետալի ծուլության, ուղեղի հիվանդության, անձնապաշտ սնապարծության, մարդատյաց մեկուսության, վայրենամիտ ոխակալության և վատթար յուրախնդրության անձկությունները, թախծությունները, հառաչանքներն ու մռնչյունները՝ գրողին սրտի թույնովը նշանադրած, արդարև ասանկ գրվածք մը Սադայելի ներշնչություն և ամենայն անարգանաց ու արհամարհանաց արժանի է»[10]:

Այս բոլորից հետո արդեն հասկանալի է, թե ինչ անազնիվ նպատակների էր հետամուտ լինում և իր անձնական թշնամությունը հասարակական հագուստով քողարկելու ինչպիսի օրհասական ճիգեր էր անում տխրահռչակ «պուետը»: Եվ զարմանալի չէ, որ «Մասիսի» նրա հոդվածաշարը քամահրանքով ընդունվեց ժամանակի ընթերցող ու գիտական հասարակության հայ ներկայացուցիչների կողմից, որոնցից շատերը, նույնիսկ տարիներ հետո, չէին թաքցնում իրենց բացասական վերաբերմունքը[11]:

Եվ բնական է, որ Ոսկանյանը «պուետի» հոդվածաշարին չէր անդրադառնալու, որովհետև ըստ էության տրված հարցադրումներ այնտեղ չկային, այլ դիմելու էր պայքարի ավելի սայրասուր, հետևաբար ավելի հիմնավոր միջոցի. հանդես էր գալու երգիծական-սարկաստիկ

---

[9] «Բյուզանդիոն», 1903, 2, 122:

[10] «Մասիս», 1859, № 402:

[11] «Միսաքյանի այս հոդվածը Ոսկանյանի դեմ,- գրում էր Ա. Ալպոյաճյանը,- որքան ալ գրական զարդերով պճնված, անիրավ բան մը ունի իր մեջ, որ այսօրվան անկողմնակալ ընթերցողը գեշ կը տրամադրե հոդվածագրին նկատմամբ, մանավանդ երբ «Արևմուտքի» խմբագրին կվերագրվի «ուսման, հմտության, դատման և ուղղախոսության պակաս»: Ոսկանյան զայրացած ոսոխի մը կողմե կրնար «անձնապաշտ», «մարդատյաց» նույնիսկ «վայրենամիտ» հռչակվիլ, ինչպես կոչած է զինքը Միսաքյան, բայց ըսել, թե ուսում, հմտություն, դատում չուներ մարդու մը համար, որ իր ժամանակին առաջին հրապարակագիրն էր, որ հակառակ իր ծայրահեղությանց իր վրիպանքներուն ու անդադար հարձակումներուն, անկեղծության ու կորովամտության առաջին շեշտը բերավ մեր հրապարակախոսության մեջ, «Սադայել» հռչակել զայն, ամեն «անարգանքի», մանավանդ «արհամարհանքի» արժանի նկատել այդ հզոր ու անկախ միտքը, Միսաքյանի անկողմնակալության մասին նպաստավոր գաղափար չի տար» (Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1923, էջ 115):

բանաստեղծությամբ, որն ուներ, ինչպես արդեն ասացինք, «Սագ մը պուետ» խորագիրը և հանդիսանում է XIX դարի՝ այդ ժանրի գործերի թվում լավագույններից մեկը։

Սագ մը տեսա՝ո՜հ ինչ սագ,
Կավ իր փետրին էր պսակ,
Մոր մ'էր իրեն ապավեն,
Վայելք կզգար նա կավեն։
Հոն ժամերով միշտ լողալ,
Ափը ելնել և սողալ
Եվ կամ բերնով անդադար
Ձայներ հանել անհարդար։

Խաչատուր Միսաքյանի «գիտական» և «հասարակական-քաղաքական» գործունեության բնութագրությունը, ինչպես տեսնում ենք, տրված է սպանիչ սարկազմով։ Եվ ասես ավելի խորացնելու ու հիմնավոր դարձնելու համար այդ սարկազմը, Ոսկանյանը շարունակում է.

Պուետ նաև կ'անվանվե
Եվ երգի ձայն կը հանե...
Անցվորք լսեն և ահա
Անթիվ խումբ մը հոն կուգա։
Ի՜նչ տեսարան, սագ պուետ
Մեծ կատակի էր անդ կետ,
Մանկտին սուլեն, ծերք խնդան
Եվ մեկնելով վա՜շ կարդան։

Այսպես, ուրեմն, անբան ու ճապաղամիտ մի սագ, որի գերագույն գեղագիտական հաճույքը մորում, այսինքն՝ տիղմում ժամերով թավալվելն ու այդ թավալումից հաճույք ստանալն է, իր սագային ուժերն ու կարողությունները հանդգնում է փորձել նաև արվեստներից բարձրագույնի՝ պոեզիայի բնագավառում, քանզի ուրիշների կողմից «պուետ նաև կանվանվե» (հիշենք այս կապակցությամբ Հակոբ Պարոնյանի տողերը. «պուետ հորջորջված է տղաներեն»)։ Թե ինչ պետք է լիներ այդպիսի «պուետության» օրինաչափ հետևանքը՝ դժվար չէ մակաբերել, և Ոսկանյանն այստեղ էլ՝ անդրադառնալով Միսաքյանի բանաստեղծական ժառանգությանը, դարձյալ մնում է իրեն բնորոշող մարտնչող մարտիկի դիրքերում։ Այս առիթով ասված ընդամենը երկու տողը՝ «պուետի» բանաստեղծական քանքարը սուլող մանուկների և արհամարհոտ քմծիծաղով հեռացող տարեցների մասին, անողոք-ճշմարտացի գնահատականն է այն ամենի, ինչը տարիների ընթացքում ստեղծել է Միսաքյանը։

Բանաստեղծության վերջին մասը մի տեսակ ի մի է բերում այն ամենը, ինչ արել է Միսաքյանն իր գործունեության ընթացքում և դրանով իսկ, ասես, մատնանշում է այն

հասարակական տեղն ու դիրքը, որը նրան վերապահված էր մեր գրական-մշակութային կյանքի համընդհանուր շղթայում։

Քու կոնչյուն, գորտերու

Հաճելի է, գետերու։

Մի սագ ապուշ, մի՛ այդպես

Հոգներ իզուր դուն զքեզ։

Էիր, մնաս համասեռ,

Մեր հավերու տղմասեր[12]։

Երգիծական այսպիսի պրիզմայի միջով է իր «զոհին» ներկայացնում ընթերցողներին Ոսկանյանը։ Եվ զարմանալի չպետք է լինի, որ «Սագ մը պուետ» բանաստեղծությունը աշխարհ գալուն պես պետք է երգի վերածվեր և «պուետի» գրական-քաղաքական հակառակորդները, օգտագործելով բարեպատեհ առիթները, այն պետք է երգեին նրա փարիզյան պատուհանների տակ։ Բանաստեղծության նպատակն ավելի շեշտակի դարձնելու տեսակետից դիպուկ է գտնված Խաչատուր «պուետի» Միսաքյան ազգանունը «մի սագ» ձևով վերափոխելն ու համապատասխան բառակապակցություններով («Սագ մը պուետ», «Մի սագ ապուշ», «Սագ պուետ») օգտագործելը, որը, ի թիվս այլ նպատակների, ներքին մեծ աշխուժություն է հաղորդում ամբողջ գործին։ Այդ խորիմաստ և սրամիտ բառախաղը տարիներ հետո նույնությամբ օգտագործելու էր Հակոբ Պարոնյանը «Ազգային ջոջեր» շարքում զետեղված «Խաչատուր Միսաքյան» դիմանկարում[13], որը նաև, այլ հարցերից զատ, բացահայտում է առ այսօր ինչպես հարկն է չպարզաբանված գրական-գեղագիտական կարևոր մի աղերսակցություն Պարոնյանի և Ոսկանյանի միջև։

Ոսկանյանի երգիծական բանաստեղծությունների տեղն ու դերը ավելի լավ պատկերացնելու համար նախ պետք է արձանագրենք, որ գրական այդ ժանրը շատ էլ երկարատև պատմություն չունի հայ գրականության մեջ։ XIX դարի պայմաններում նրա առաջին սաղմերը նկատում ենք Վենետիկի Մխիթարյան վարդապետների գործերում, որոնք, սակայն, այն օգտագործում էին նեղ նպատակների համար։ Արսեն Բագրատունու «Ի հերիսայն» (հիացմունք է հայտնում այս ուտեստի առթիվ, որի ներկայությունն իսկ գայթակղիչ է), «Անէծք ի ճանճս» (իր երգիծախառն զայրույթն է հայտնում ճանճերի առթիվ, որոնք խանգարում են ստեղծագործել), Մանվել Ջավախյանի «Մեղու» (գտնում է, որ մեղուն օգտակար կենդանի է, բայց վատ է, որ կծում է) և համանման ուրիշ ստեղծագործություններ գալիս են մեր ասածը հավաստելու։ Հասկանալի է, որ նման ուղղության գործերը շատ փոքր գրական արժեք ու հասարակական կշիռ ունեին։ Չմոռանանք նաև, որ հիշյալ բոլոր գործերը գրվում էին հայկական կլասիցիզմի տիրապետության տարիներին, իսկ մեր կլասիցիզմի տեսաբաններն էլ, հետևելով եվրոպացիներին, շատ էլ համակրանքով չէին խոսում այնպիսի ստեղծագործությունների մասին, որոնց խնդիրն էր «զմարդն ի ծաղր առնել»։

---

[12] «Արևմուտք», 1895, № 10։

[13] Բնութագրելով «պուետին», Պարոնյանը գրում էր. «Մի վախնաք... չպիտի մորթեմ զինքն, ոչ ալ ՄԻ ՍԱԳԻ ՓԵՏՈՒՐՈՎ պիտի հարվածեմ զինքն», իսկ անդրադառնալով նրա գրական վաստակին, հավելում էր. «Միսաքյան... ուրիշներու ստացվածքն հափշտակելով, իբրև ՄԻ ՍԱԳ ՊՈՒԵՏԻ փետուրներով զարդարվելեն վերջը...» և այլն։ (Հ.Հակոբյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 127, 130-131։ Ընդգծումները մերն են)։

Երգիծական բանաստեղծություններին քաղաքական-հասարակական երանգավորում տալը և, հետևաբար, այն հակառակորդների դեմ պայքարի միջոց դարձնելը վերապահված էր Մեսրոպ Թաղիադյանին։ Նրա «Համեմատութիւն Մեսրովբայ վարդապետի եւ աթարակիր իշոյն...» (զրույցի հենքի վրա բացահայտված են հոգևորականության հոռի վարքն ու բարքը) բանաստեղծությունը և մանավանդ Էջմիածնի վանականության մտավոր մակարդակը խարազանող հանրահայտ քառյակը («Երբ թքաման թանաքաման...»), որն այնքան լայն արձագանք ու տարածում ունեցավ, գալիս էին նախ՝ ապացուցելու, որ գրական այդ ժանրը վերջնականապես ձևավորվել և իր գրական ավարտուն կերպարանքն էր ստացել, և երկրորդ՝ այն իր թեթևամիտ, ինչ-որ տեղ նաև անիմաստ հանգաբանությունից վերածվել էր քաղաքական պայքարի ազդեցիկ միջոցի։

Ոսկանյանը գալիս էր շարունակելու և զարգացնելու թաղիադյանական այս ավանդույթները և իր ինքնուրույն խոսքն ասելու գրական այդ ժանրը մի նոր աստիճանի բարձրացնելու գործում։ Այվազովսկուն և «պուետին» նվիրված երգիծական-սարկաստիկ բանաստեղծությունները, ինչպես նաև «Արևելքի» և «Արևմուտքի» էջերում հանդիպող մի քանի ուրիշներն էլ ցույց են տալիս, թե Ոսկանյանը որքան հիանալի գիտեր օգտագործել այդ ժանրի ընձեռած հնարավորությունները և ինչպես ճշտորեն ու անվրեպ էր կարողանում օգտվել դրանցից։ Իր քաղաքական սատիրան ավելի նպատակասլաց դարձնելու և ընթերցողներին առանց մնացորդի հասկանալի լինելու համար Ոսկանյանը համարձակորեն մի կողմ թողեց գրաբարը, որով ստեղծագործում էին նրա նախորդները և անվերապահորեն անցավ աշխարհաբարին։

Այս ժանրի հետագա զարգացումը և նոր որակի՝ քաղաքական-երգիծական պոեզիայի վերածվելը արդեն կապվում է Միքայել Նալբանդյանի անվան հետ։

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

1977 № (3)33